ՊԱՐԻՍՈՒ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆ ԿԸ ԾԱՆՈՒՑԱՆԷ ՀԵՏԵՒԵԱԼ

N. 31

Հայ Ազգային Համագումար.

Հայ Ազգային բանախօսական Համագումար մը տեղի կ'ունենար մի քանի շաբաթներէ ի վեր Պարիսու մէջ, Հայկական Պատուիրակութեան հրաւերով։ Երկար խորհրդածութիւններէ վերջ կը փակուին նիստերը կարևոր որոշողութիւններով, որոնք ատաղձ պիտի մատակարարեն և ուղղութիւն՝ գործելու յօգուտ և ի պաշտպանութիւն ազգային շահերուն և ազատագրութեան Հայաստանի։ Ցիշեալ Համագումարն վերջնորեր է ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆ, զոր կը կազմեն Վսեմափայլ Պօղոս Նուբար Փաշան, Ուսուցչապետ Ա. Տէր-Յակոբեան, Դոկտ. Հ. Նէվրուզ և Գ. Պատերմաճեան. և ՏՏ. Ա. Զօպանեան և Վ. Թէքէյեան։

Սոքա պիտի աշխատակցին համաձայնութեամբ Այրարատեան Հայկական Հանրապետութեան պատուիրակներու հետ, որք են Մեծապատիւ Տեարք Ա. Ահարոնեան, Հ. Օհանջանեան և Մ. Պապաջանեան. երկուց միութիւնն պիտի կազմէ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը, որոյ նշանաբանն լինելու է. «Ամբողջական Հայաստանը Ազատ և Անկախ իր պատմական սահմաններու մէջ»։

N. 32

Հայկական Առողջապահիկ Առաքելութիւն մը Կիլիկիոյ համար.

Մայիսի 6ին Տուլոնէն մեկներ են՝ դէպ ի Ալեքսանդրէտ, Կիլիկիա գնացող Հայկական Առողջապահիկ Առաքելութեան անդամներն, որք են ՄՄ. ՏՏ. Դոկտ. Հայրանեան, Քաջբերունի, Մնացականեան, և ի ժողովէ Դոկտ. Ամատեան, Տիկին Սարգիսեան, Զամարեան, Լոզանէն՝ Սարգիսեան, Դոկտ. Ղազարոսեան և Դամլամայեան, և հիւանդապահուհիք Օր. Մասէհեան, Գարամեան և Պարիսէն Ղազարոսեան, և Դոկտ. Մանկոյեան՝ Լոնդոնէն, համագումար տասնըմէկ Դոկտ. բժիշկներ, մի բժշկուհի և երեք հիւանդապահուհիք. բոլորն ալ հայազգի, կամաւորութեամբ իրենց ծառայութիւնն Հայկական Պատուիրակութեան տրամադրութեան ներքև դրած։ Առաքելութեան գլուխն կանգնած է Դոկտ. Ղազարոսեան, որոյ բազմափորձ հմտութիւնն և համբաւն միայն կ'ապահովուրէ յաջող ելքին։

«Բազմավէպ»ն հիացմամբ կ'ողջունէ Հայկական անդրանիկ Առողջապահական Առաքելութիւնն, մաղթելով լիուլի յաջողութիւն իրենց հայրենասիրական և մարդասիրական ձեռնարկին։ Իրենց Թանկագին ծառայութեանց համար համապատասխան վարձատրութիւնը պիտի ըլլայ ինչպէս կը յուսանք, ոչ թէ միայն կարտեղոց, այլ բոլոր ազգիս երախտագիտութիւնն։

Մեզ համար ուրախալի է անչափս. զի այդ Առաքելութեան մէջ մենք կը նկատենք Հայ մտքի յաղթանակներէն մին։ Հայ մտքի հրաշքներն են, որ Եւրոպայէն առած գիտութեան լուսով կ'երթան մութ և անպատրաստ երկիրները՝ դարմանելու իրենց հեծող եղբայրները և հաշածմաշած մարդկութիւնն։

Ոգի՛դ Հայաստանեայց, երթ տար խաղրիկ Նահապետին, թէ իւր երդումն ընդունելի եղաւ. որոտաց, ձայն տուաւ Մասիսն։

Ծագե՛ց Հայ հանճարն,
Փայլեցին բիւր բոցեր.
Իմացան ազգեր՝
Թէ Հայք չեն անցեր։

N. 34

Հայաստանի հաստատուելիք Պետութեան ժողովուրդը։

Ցարակոյս չկար որ Հայկական Պատուիրակութեան Պարիսու վեհաժողովին ներկայացուցած մանրամասն ծրագիրներն մեր ազատագրութեան պահանջներուն դէմ՝ դժուարութիւններ պիտի ծագեցնէին։

© National Library of Armenia

ինչ որ մեզի յայտնի, որոշ և իրական դէպքեր են և ճշմարտութիւններ, մեր հայրենեաց անցեալի, ներկայիս և ապագայի պատմութեան, մարդկանց, գործերու և գործուածներու և գործուելիքներու մասին, նոյնը չեն կրնար խորհել մեզմէ օտար զգացումներ, մտածութիւններ և շահեր ունեցող մարդիկներ, որոնք կոչուած են այս պարագային մէջ մեր Հայրենիքի վերջնական վճռի մէջ դատավարելու և դատաստան ընելու արդարապէս։ Մեր հակառակ զանգակներն ալ ուժգին կը հնչեն. սրտեր կը պղտորեն, մտքեր կը ցրուեն, ուղիղ ճանապարհէն կ'ուզեն բռնի մոլորցընել։

Մեզի յայտնի է հետեալն.

Անցեալ դարու կէսերէն սկսած Թուրք կառավարութիւնն երբ նկատեց Հայոց հրկայաքայլ զարգացումն գիտական և գրական ասպարէզի վրայ, ինքնաճանաչութեան և ազգային ինքնավարութեան զարթնումն, սեփական հայրենիքի մը անկախութեան երազներով խանդոտիլն, պալատական խորհրդակցութեան մը մէջ, ի ներկայութեան Սուլթանին, Վէզիրն և մեծամեծներն եկած էին այն եզրակացութեան թէ «Հայերն սկսեր են կատղիլ, պէտք է քիչ մը արիւն առնել»։ Պատահական մտածութիւն մը չէր և ոչ աննախընթաց որոշումն։ Արևելեան բռնաւորներու սովորական սկզբունքներն և խոհական գործերն են, որով իրենց ըմբոստ և տժգոհ տարրը խելքի կը բերէին, հլու և հնազանդ հպատակներ ունենալու համար։ Թէ որքան եւրոպական բանկոնակի մէջ կոնկուած այսօրուան Թուրքերն սողոնօրէն ծծեցին հայի արիւնը մինչև Ապտիւլ Համիտի գահակալութիւնը, մենք հայերս միայն գիտենք։ Կարմիր գազանի քառասուն տարուան մէջ գործած նախիրներն միայն՝ ցնցեցին Եւրոպայի մարդասէր ոգիներից մի քանիսն. իսկ ընդհանրութիւնն կամ անտեղեակ մնաց կամ անտարբեր. վասն զի Ասիոյ Տաճկաստանի ջարդերն եւրոպացւոց շահերուն ինչա չէր տար. այլ ընդհակառակն գերմանացւոց արևելքի մէջ անտեսական նուաճումներն գրգռեցին շահագործողներու անասնական բնազդը, աշխատակցելու Թուրքի հետ, գիտնականօրէն բնաջինջ ընելու զհայութիւնն, այսինքն տեղահանել և բնակեցնել Պաղեստին երկաթուղոյ երկարութեամբ. իսկ զՀայաստան լեցնել ասկից անկից եկած մոհամէդիներով։ Գերազանցօրէն յաջողեցան 1915ին իրենց «Կուլտուրական» ձեռնարկին առաջին կէտին մէջ. իսկ երկրորդին՝ մնօրինելու իրաւունքն՝ տեղահանուած Հայուն վերապահուած է այժմ.

Պարիսու վեհաժողովն՝ հաշուեյարդարութեան պահուն, առանց կողմնակցութեան և դրամական խնամիական կապերու,—հաւատալով որ հաւատարմութեամբ պիտի գործադրուին Ուիլսընեան սկզբունքներն—, ոճրագործ խուժանին և անոնց մարդասպան պետերուն, առաջին պայմանը սա դնելու է. արտաքսել Հայաստանէն այնքան Թուրք, որքան զոհ տուին հայերն այս համաշխարհական պատերազմի մէջ. Երկրորդ, վերադարձընել բոլոր մահմետականացած հայերն ներկայ պատերազմի ընթացքին մէջ. Երրորդ, Հայաստան գնալիք յանձնախմբին արտօնուի խոյզ և խնդիր ընել գոնէ մի դար առաջ բռնութեամբ մահմետականացած հայերու մասին և հարցուփորձի ենթարկել անոնց սերունդներն, որոնք դեռ մեր գիտութեամբ կը պահեն իրենց նախնեաց աւանդութիւնները, անունները, գերեզմանոցներու յարգանքը, եկեղեցիներու սրբութեան պահպանութիւն, թէ և փակուած են և աւերակ վիճակի մէջ. զոր օրինակ հրազէյս դնել երբեմնի քրիստոնէութեան ուխտատեղիներու վրայ, և այլն և այլն. թերևս անոնք լուսաւորուին Աստուծոյ շնորհքով և դառնան քրիստոնէական հաւատքին և իրենց ազգութեան։

Մեզի պատահեր են նաև քրդեր, որոնք հաւաստեր են (որքան կարելի է քրդուն հաւատալ) թէ երբ Հայոց իշխանութիւնն հաստատուի, իրենք կը դառնան քրիստոնեայ կ'ըլլան, վասն զի աւանդաբար պահուած է մէջերնին թէ իրենց նախնիք հայեր եղած են։

© National Library of Armenia

Ահա այն ժամանակ ակներև պիտի ըլլայ որ Հայ ցեղը գերակշիռ թիւ մը կը կազմէ նաև ի ներկայիս Հայաստանի հողի վրայ։

Ուստի՞ Թուրքերն մեծամասնութիւն կը կազմեն Հայաստանի մէջ, հանդերձ իրենց բազմակնութեամբ — բայց անբարոյական կեանքի հետևանքներով — անոնց աճումն հազիւ 2 % կը հասնի, մինչդեռ Հայի անարատ վառարանի շուրջն աճումն 7–8 % կը բարձրանայ։ Ամիսներով կազմալուծուած Թուրքերու ջիղերն՝ հայ արիւնով կ'ամրապնդեն, բռնի թրքացումներով առանձգելով և գերելով քրիստոնայ հպատակները։ Սուլթաններու արքունիքն անգամ թարմացողներն հաստապարանոց և աճառապինդ տահեաններն եղած են։ Քիւչիւք Էրմէնին՝ կ'առոսպելարանն թէ հայի վատ երակէն վիժած ըլլայ։

Հայկական Պատուիրակութեան մեր առջևը դրած ազգագրական ցուցակի վրայ ուշ դարձնելով, զոր Պր. Կինէ կազմեր է, որոյ հեղինակութիւնը շնորհակալութեամբ հանդերձ կը գնահատենք, սակայն լաւ կը լինէր, յամենայն դէպս, յետադարձ ակնարկ մը տալ Հ. Ինճիճեանի Նոր Հայաստանի աշխարհագրութեան հատորին։ Այս բազմարդիւն և գիտնական Մխիթարեանն անցեալ դարու սկիզբներն անձամբ ճանապարհորդեր և նկարագրեր է մանրամասնօրէն մեր հայրենի գաւառները, այն ժամանակ երբ միամիտ էր աշխարհն, և հայը խոնարհ և հնազանդ հպատակ մ'էր Սուլթաններուն։ Վերցնելով միայն վանի կուսակալութիւնն, նախ կ'ըսէ թէ մեծաւ մասամբ հայերէ բնակուած է, յետոյ թուելով մի առ մի քաղաքներն և գիւղերն եբեք ազգութեանց Հայ, Թուրք և Քուրդ, միջին հաշուով Հայերն կը կազմեն 49,000 տուն, Թուրքերն 15,000 տուն, իսկ Քուրդերն 9–10000 տուն։ Ցորմէ կը տեսնուի որ Հայերն դեռ այն ժամանակն իսկ ճնշող մեծամասնութիւն կը կազմէին հանդէպ Թուրքերուն և քրդերուն։

Կարելի՞ է հարցնել իտոիհատականներուն, ուր գնացին, ուր մնացին, ուր գերուեցան, ջարդուեցան, հաւատափոխ եղան այդ խաղաղ և աշխատասէր արուեստաւոր և երկրագործ ժողովուրդն, որ այսօր փոխանակ հազիւ 300,000ի, պէտք էր կըրկնապատիկն լինէր և եռապատիկ, լաւ գիտնալով որ հայ ցեղը 24–25 տարին մէկ մը կը կրկնապատկուի։ Գոնէ Ռուսաստանի փոքր ի շատէ կովկասի վիճակագրական ցուցակներն զայդ կ'ապացուցանեն։ Հ. Ինճիճեան 1800ին կատարեր է իւր ճանապարհորդութիւնն ի Հայաստան. հիշա նոյն տարին Վրաստանն կը մտնար Ռուս կայսերաց հովանաւորութեան տակ։ Հիմակուան Այրարատեան Հանրապետութեան սահմաններու մէջ այնքան հայութիւն չկար, որքան վանի կուսակալութեան մէջ։ Թուրքէն անհամեմատ բարեկարգ Ռուս կառավարութեան տակ արդ հայերն մօտ երկու միլիոն պատկառելի թիւ մը կը կազմեն. մինչդեռ տահկաստանի վեց հայկական վիլայեթներէն Պր. Կինէ հազիւ երդմամբ կը ստուգէ 2,400,000 հայ ազգաբնակութիւն։

Ab uno disce omnes.

Թուրքերն այսօր իսկ աներեսաբար կ'ուզեն շահագործել մեր անցեալ թշուառութիւններն, կ'ուզեն ծածկել իրենց գործած դարաւոր ոճիրներն անմեղ և անզէն ազգի դէմ։ Իրաւունք և արդարութիւն թէ որ սին անուններ չեն, պետական անձանց շրթունքներու վրայ, պէտք է այս յաւիտենական ամօթն սրբեն խղճի և պատուոյ և Հայաստանի ճակատէն։

Մեղրի Շիրանաց

© National Library of Armenia